Հավելված
ՀՀ վարչապետի 2013 թվականի
նոյեմբերի 26-ի N 1087-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը	Սամվել Հարությունյան
Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ
Գործուղման վայրը և ժամկետները	Դուբնա՝ 2018թ. մարտի 26-ից 27-ը և Մոսկվա՝ 2018թ. մարտի 28-ից 29-ը
Հրավիրող կողմը	Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ (ՄՀՄԻ), Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամ, «Կուրչատովյան ինստիտուտ» ռուսաստանյան գիտական կենտրոն
Գործուղման նպատակը	Մասնակցություն ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի նստաշրջանին, հանդիպումներ Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամում և «Կուրչատովյան ինստիտուտ» ռուսաստանյան գիտական կենտրոնում
Քննարկված թեմաները	«ՄՀՄԻ - նոր դարաշրջանի 25 տարին» խորագրով միջազգային կոնֆերանս, ՄՀՄԻ 2017թ. բյուջեի կատարողականը, 2018թ. հստակեցված բյուջեն, 2018թ. մարտի 23-ից 24-ը կայացած ՄՀՄԻ ֆինանսական կոմիտեի նիստի արդյունքները, «Գերհամակարգիչ» (Суперкомпьютер)- համակարգի մասին, ՌԴ «Ռոսատոմ» ատոմային էներգիայի հարցերով պետական կորպորացիայի հետ համագործակցության մասին, Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի հետ համագործակցության ընդլայնում
Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը	2018թ. մարտի 26-ին կայացել է «ՄՀՄԻ - նոր դարաշրջանի 25 տարին» խորագրով միջազգային կոնֆերանսը, որի ընթացքում ելույթ են ունեցել ՄՀՄԻ տնօրեն Վ. Մատվեևը, ՄՀՄԻ անդամ-

	պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի նախագահ, ՌԴ ԿԳ փոխնախարար Գ. Տրուբնիկովը, ՀՀ ԿԳ նախարար Լ. Մկրտչյանը և այլոք: Ս.թ. մարտի 27-ին կայացած ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի նստաշրջանին քննարկվել են ՄՀՄԻ գիտական խորհրդի 123-րդ նստաշրջանի առաջարկությունները, գիտահետազոտական աշխատանքների, հիմնարար հետազոտությունների ոլորտում երկարաժամկետ միջազգային ծրագրերի կատարման ընթացքը, ՄՀՄԻ 2017թ. գործունեության արդյունքները, ՄՀՄԻ 2017թ. բյուջեի կատարողականը, ս.թ. մարտի 23-ից 24-ը կայացած ՄՀՄԻ ֆինանսական կոմիտեի նիստի արդյունքները, «Գերհամակարգիչ» արդեն իսկ գործող համակարգի իրականացրած ծրագրերը, ՄՀՄԻ երկարաժամկետ զարգացման ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքները և այլ հարցեր: Նստաշրջանին ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահ Սամվել Հարությունյանն իր ելույթում անդրադարձել է ՄՀՄԻ կողմից գիտական աստիճանաշնորհման լիազորություններին, նշելով, որ ՄՀՄԻ անդամ-պետությունների կողմից դրա իրավունքների ճանաչման համար անհրաժեշտ է գիտական աստիճանաշնորհման խորհրդի կազմում ընդգրկել ՄՀՄԻ անդամ-պետությունների մասնագետներին նույնպես: Ելույթի ընթացքում Ս. Հարությունյանը նշել է ՄՀՄԻ անդամ-պետությունների համար գիտական աստիճանների դիպլոմների փոխճանաչման վերաբերյալ միջպետական համաձայնագրի ստորագրման անհրաժեշտության մասին: Ելույթում բարձրացված հաջորդ թեման՝ Դուբնայի համալսարանի հենքի վրա Տեխնիկական բարձրագույն դպրոցի ստեղծմանը Հայաստանի գործուն մասնակցության մասին էր: Ս.Հարությունյանը նշել է, որ Հայաստանի Հանրապետությունը պատրաստակամ է Դուբնա գործուղել ինչպես բարձր

	որակավորում ունեցող մասնագետների՝ դպրոցում դասավանդելու, այնպես էլ ուսանողների՝ մասնագիտական կրթություն ստանալու նպատակով: Նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահ Սամվել Հարությունյանն ունեցել է մի շարք հանդիպումներ: Մասնավորապես՝ ՌԴ ԿԳ փոխնախարար Գ. Տրուբնիկովի հետ քննարկել է Գերհամակարգչային կենտրոնում հայաստանյան գիտնականների կողմից աշխատանքների կատարման հնարավորությունը: Վերոնշյալ կենտրոնն իր հզորությամբ հինգերորդն է ամբողջ Եվրոպայում: ՄՀՄԻ տնօրեն Վ. Մատվեևի հետ հստակեցվել է Դուբնայում Հայաստանի օրեր անցկացնելու ժամկետները, ինչպես նաև քննարկվել է Յուրի Օգանեսովի 85-ամյակին նվիրված միջոցառումների ժամանակացույցը: 2018թ. մարտի 28-ին Մոսկվա այցի շրջանակներում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը հանդիպել է Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի տնօրեն Վ. Պանչենկոյի հետ: Հանդիպման ընթացքում քննակվել է երիտասարդ գիտնականների համագործակցության մասին համաձայնագրի ստորագրման հարցը: Համաձայնագիրը հնարավորություն կընձեռի երիտասարդ գիտնականներին մասնակցելու ՀՀՌՀ գիտական միջազգային ծրագրերին: Վ.Պանչենկոն հայտնել է իր շահագրգռվածությունը ՀՀ ԿԳՆ ԳՊԿ կողմից ներդրված «Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին և մինչև 35 տարեկան երիտասարդ գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման» ծրագրերն ուսումնասիրելու և ՀՀՌՀ համակարգ ներմուծելու վերաբերյալ: Ս.թ. մարտի 29-ին ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահ Ս. Հարությունյանը հանդիպել է ՌԴ «Ռոսատոմ» ատոմային էներգիայի հարցերով պետական կորպորացիայի գիտության զարգացման վարչության տնօրեն Գ. Սարիչևի հետ: Հանդիպման ընթացքում

	քննարկվել է համագործակցության հեռանկարները՝ հատկապես երկակի նշանակություն ունեցող համատեղ ծրագրերի իրականացման ոլորտում: Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև «Ռոսատոմ» պաշտոնական գրասենյակի վերաբացման հարցը: «Կուրչատովի ինստիտուտ» - Հայաստան համագործակցության հեռանկարների մասին է քննարկվել «Կուրչատովի ինստիտուտ» ռուսաստանյան ազգային կենտրոնի փոխտնօրեն Մ. Պոպովի հետ հանդիպման ընթացքում: Մարտի 29-ին ՌԴ նախագահ Վ. Պուտինի տնտեսական ինտեգրման հարցերով խորհրդական Ս. Գլազևի հետ հանդիպման առանցքային թեման առաջիկայում հայ - ռուսական գիտական համագործակցության շրջանակներում տեխնոլոգիաների տրանսֆերի ուղղությամբ համագործակցության իրականացումն էր:
Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:	ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր նստաշրջանին ընդունվել է ՄՀՄԻ 2017թ. բյուջեի կատարողականը, հաստատվել է 2018թ. բյուջեն, 2018թ. մարտի 23-ից 24-ը կայացած ՄՀՄԻ ֆինանսական կոմիտեի նիստի արձանագրությունը, ՄՀՄԻ գիտական խորհրդի անդամների նոր ցուցակը: ՄՀՄԻ տնօրեն Վ. Մատվեևի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ ՄՀՄԻ-ում Հայաստանի օրերն անցկացնել ս.թ. հունիսի երկրորդ կեսին: Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի տնօրեն Վլադիսլավ Պանչենկոյի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել ս.թ. մայիսի 14-ից 16-ը Մոսկվայում կայանալիք Գլոբալ հետազոտական խորհրդի (ГИС) կազմում ընդգրկված ազգային գիտական կազմակերպությունների ղեկավարների ամենամյա հանդիպման շրջանակներում գիտության, տեխնիկայի և ինովացիաների ոլորտում կնքել համաձայնագիր՝ երիտասարդ գիտնականներին աջակցություն տրամադրելու

	վերաբերյալ: 2008թ. մարտի 25-ին կնքվել է Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի միջև համագործակցության մասին մտադրությունների հուշագիրը: Վերոնշյալ հանդիպման շրջանակներում նախատեսվում են նաև հայ-ռուսական համագործակցության 10-ամյակին նվիրված միջոցառումներ:
Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	Առաջարկվել է ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի հաջորդ նստաշրջանն անցկացնել 2018թ. նոյեմբերին Բուխարեստում:
Գործուղվող՝	Սամվել Հարությունյան
Ստորագրություն, ամսաթիվ	03.04.18թ.